

Պեր. Վ. և ոնդ վարդապետ՝ Պանտրենյու և Պալը քեհեքու Եւաջնորդը զեղեցիկ մի Եաննաբանու թիւն խօսեցաւ:

Մաղթանքի ժամանակ Ա. և հարանին սրահը՝ Երժանապատիւ Աղեա Երեզայ Ջալալեանը խիտ ազդու և սրատաճ՝ մի ձառ ընթերցաւ, զոր ստորև կը հաղորդենք մեր սիրելի Եզդայնոց:

Նաև սեղանատան մէջ տիրացու Պրիգոր ուրարտիկիրը մի ուղերձ կարդաց: Ար յետոյ "կեցցէ" ներ գոչելով հանդիսականք, Ս. Եթոռոյս հաստատութեան և յառաջադիմութեան, և Եզգիս Հայոց լուսաւորութեան և յառաջադէմ բարգաւաճանաց համար՝ բաժակներ քամեցին:

Նոյնպէս վանն կենաց երկարութեան՝ և նպատակաց ու ձեռնարկեալ գործոցն յաջողութեան և արդիւնաւորութեան Ա. և համարա Վաթողիկոսի բաժակներ առաջարկուեցան, և սրտաբուղն "կեցցէ" ձայնից գոռումը, յայտնի կը պարզէր զգայուն և եռանդուն հանդիսականաց համակրութիւնը և սէրը առ Ա. և համարա և սրբազնագոյն Վաթողիկոս:

Իսկ երեկոյան հրավառութեանց հանդիսին զեղեցիկութիւնն ևս զմայելի էր: Աւ բոլոր ժողովրդին մեծ ուրախութիւն միանգամայն մխիթարութիւն ազդեց:

Ս.

ՄԱՂԹԱՆՔԻՆ ԿԱՐԴԱՅՈՒԱՅ ԶՍՈՐ:

ՎԵՀՍՓԱՌ

ՍՐԲՍՁՆԱԳՈՅՆ ՔՍՀԱՆԱՅՍՊԵՏ

Հրաշափառ և երկնահամարէս աւուրս աստուածութիւն հաւատարի ասնէ, զայն սրբաեռանդն ուրախական զգացմունս, զոր կրէ յինքեան լուրթիւն ընդհանրութեան Եզ-

զիս մերոյ՝ միօրինակ, ամենայն ուրիք, վերաբերութեամբ առ սուրբ և սուսքերտական Ահեղեցին իւր. փասն զի՝ ասնէ նա այսօր միահամուռ համագրակցութեամբ զհիմնարկութիւն այնր Տաճարի փառաց սրբութեան, որ Մայրն է ամենայն եկեղեցեաց իւրոց, որով և լուրթեանն իւրոց:

Աւ ահա այսօր Եզգ մեր և Ահեղեցի կատարելով զայս զերափառագոյն հանդէս հոգեւոր ուրախութեան, ասնէ նա այսու զհոգեւոր փրկութեան և երջանկութեան իւրոց զառաջին սկզբնաւորութեան գլխաւորն՝ յԱստուածածանութեան և ՚ի Վրիստոնէութեան: Տօնէ զչնորհս բարերարին Եստուծոյ, որով ՚ի մահուանէ, ՚ի կեանս և ՚ի խաւարէ, շեթանասական տղիտութեան ՚ի լոյս փրանորոգեցաւ աշխարհ իւր: Տօնէ զայն փառս և զպարզէս երկնաւորս, որով կեանք մարդկան անօրինեցաւ յուզողութիւն և յարգարութիւն, և զայն երախտիս՝ զոր ընկալաւ նախախնամութեամբն Եստուծոյ, բազմաչարչար նահատակութեամբ սրբոյ Աւսաւորչին իւրոց, որում փոխարինեաց և ետ ՚ի ցոյց երախտաղիտութեան իւրոց և ՚ի յայտնել զնշանակութիւն գործոյ նորին՝ զանունս "Աւսաւորիչ" - ուրեմն և գլխաւոր Աւսաւորութեան իւրոց: Յիշեցուցանէ Տօնահանդէսս Հոգեւոր, նաև՝ զայն փառաւորութիւն Ահեղեցեոյս մերոց, որով սուրբ Եսաքեալքն թաղէոս և Բարդուղիմէոս անդատին եղին հիմնարկուք Վրիստոնէութեան ՚ի Հոյաստան աշխարհի, որ պահեցաւ յասպն արծարծման սրբոյ Հայրապետին, ըստ Նէնմականին անշեջանեւոյն այնուհետև մինչ ՚ի սպառ:

Աւ թէ զայս ամենայն յարգարէր անօրէնութիւն վերին Տեսութեանն, յայտանախ իսկ է, զի ոչ կարէր մարդ ասնել զդոյնս ինքնին զօրութեամբ անձին իւրոց: Ուստի հիմունք սրբոյ Տաճարիս և Ահեղեցեոյս հիմնաւք են ՚ի կամս Եստուծոյ, իրրև

դիտան յաւիտեանս և անշարժ շինուցի
 նորա՝ ի լեռան սուրբ նորա, վասն զի վիճիք
 շինուածոյ Արբուժեան նորին հասեալք են
 ի լեռնէն Արնոյ և ընծայեալք աղզի մարդ-
 կան. վասնորոյ և "Արիէ Տէր զԱիօն առաւել
 քան զամենայն յարկան Յակովբայ". և վասն
 զի՝ Գոյն Տաճար սրբութեան, Գոյն Յարկ
 լուսեղէն ծնանի անընդհատաբար զկենդանի
 տաճարս Աստուծոյ և պարզեւէ՝ նոցա զոր-
 դեղրութիւն շօրն երկնաւորի, ջամբելով
 զկաթն մայրական և սնուցանելով յերկունս
 շնորհացն իւրոց. և զի՞նչ կաթն ի նմանէ
 ջամբեալ, որով որդիք իւր ապրին ի մարդ-
 կութեան համապատշաճք նմին և պահպա-
 նեն յինքեանս զմարդտիպիչ կեանս. զի՞նչ
 ենթադրէ կաթնոց բարոյական, եթէ ոչ զօ-
 բէնս Աստուածայինս և զնոյն իսկ զբարոյա-
 կանութիւն, և տարեք երջանկութեան մար-
 դոյ, յիմեքէ՞ զոյանան և տաճին, եթէ ոչ ի
 կաթանէդ յայգմանէ մատակարարեցելոյ յերկ-
 նուստ, յորում ամիտիին՝ մայրական օրհ-
 նութիւն իւր և յատկութիւն կենաց մարդ-
 կան: Աւ սյրու ևս "Արիէ Տէր զԱիօն, ա-
 ռաւել քան զամենայն յարկան Յակովբայ":

Յնծայ և զուարճանայ այսօր անախեղծ
 ուրախութեամբ, հարսնացեալն Վրիստոսի
 Արկնաւոր փեսայի Աթուղիկէ սուրբ Աջ-
 միածին շնորհասուն Մայրս լուսոյ Բնդհա-
 նուր Ակեղեցեացս Այլաստանեայց. քանզի
 ահա արժանաժառանգ Յաջորդ սրբոյն Վրի-
 գորի լուսաուրչին իւրոյ, Ահհափառ Աքք-
 բաղնադոյն Աթողեկոսն իւր շքեղացուցանէ
 և փառազարդէ զԱթոռ սրբութեան իւրոյ
 և ջնջէ զհետս տխրութեան, որ ի դարս
 դարս ըստ հանգամանաց ժամանակին սուրբ
 էր տարածանել ի վերայ նորա զգոյ և կամ
 զայրիութեան սևաաքօղութիւն, որ արդէն
 անմատչել է վասն նորա, թէ՛ շնորհիւ
 Օգոստափառ Տէրութեանն, և թէ՛ Վերա-
 փառ արժանաւորութեամբ զահաժառան-
 գաց իւրոց:

Աւ զի՝ ընդ անմիջական հովանեալ
 Տաճարիս լուսոյ՝ սրբազան և պատկառե-
 լի հոգեւորական դասուց համախրմբում
 նրա այս՝ ընդ համոյն որդւոց իւրոց՝
 հնչեցուցանէ յերկինս զկրօսս և զբոհու-
 թիւն առ երկնաւոր թաղաւորն և մաղթէ
 զհաստատութիւն և զանյաղթահարութիւն
 վասն սորին, որով ընդունի զլոյսական
 սէր նոցին:

Այլ ևս ահա, այսօր ընդհանրութիւն
 որդւոց Մայր եկեղեցւոյս և Աստուածա-
 հաստատ սրբոյ Աթոռոյս՝ շլթայիւք նուի-
 րական ուրախութեանս այսօրիկ, ի զանա-
 զան անջատման և ի հեռաւորութեան իւ-
 բեանց՝ կապեն և միաւորեն զսիրտս իւրեանց
 և զհոգի ընդ միմեանս և բորբոքեն ի նոսա
 զԱստուածահաճոյ սէրն եղբայրութեան և
 զհուրն հաւատոյ, զորով զաւակուելք մի և
 նոյն Մօրն իւրեանց՝ որով և կազմեն զմի
 զօրեղ և զանկթար ամբողջութիւն, առ ի
 չսասանիլ երբէք ի յորձանաց դարուց և
 ի հեղեղաց զայրաբաղտից՝ ի յաւիտեանս
 ժամանակաց:

Թեպէտ ի տխրութեան տեսնի լեռան
 սուրբ Մասիս, վասն զի՝ բարձրահայեաց
 սիււնք իւր ոչ նշմարեն շուրջ զերև-
 համախմբեալ զլլութիւն զաւակաց իւրոց
 սեպհականաց. սակայն՝ Ակեղեցին սուրբ,
 Աստուածակառօցց Տաճարն սրբութեան
 մեղմէ զտխրութիւն նորին՝ գորովալից ակ-
 նարկութեամբն իւրով. յորում նոքա (որ-
 դիքն) կապեալք են համակրութեամբ միան-
 զամոյն, որք հեռացեալք, առիթ վշտոց
 նորա լինէին: Աւ ինքն սուրբ Ակեղեցին,
 որ փոխարինէ հոգեւոր և համաափիւռ հրեճ-
 ուանայ որդւոցն իւրոց՝ զմայրական զօրհ-
 նութիւն իւր և զերկնառաք բարեմաղթու-
 թիւնս, երբ ունելոց է արդեօք զուրախու-
 թիւնն իւր ի կատարեալ և ի մխիթա-
 րական սահմանի, բայց միայն յայնժամ,

